CA 32-1 / 89

# ԲԱՄԲԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄԸ 1931 ԹՎԻՆ

## Ա. Ս. Ֆ. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

## № 334

## ՎՈՐՈՇՈՒՄԸ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

35
Բ-25

ԲԱԳՈՒ—1931

Главлит № 1766.
Тип. „Красный Восток" Азполиграфа ВСНХ.
Баку, Карантинная 84. Заказ № 3865.
Ст. формат Б6 500.

5/25

MAR 2010

# ԲԱՄԲԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄԸ—1931 ԹՎԻՆ

## Ա. Ս. Ֆ. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 334 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բամբակի համար պայմանագրեր կնքելը կարևորագույն տնտեսական-քաղաքական կամպանիա է։ Դրա հաջող տանելուց է կախված բամբակային տարածությունների ընդարձակելու և բերքատվությունը բարձրացնելու համար դրված խնդիրների լիակատար իրագործումը, դա վճռական նշանակություն ունի կոլխոզային շարժման հետագա աճման և 1931 թվին բամբակային ռայոններում տնտեսությունների 50%-ը կոլլեկտիվացումով ընդգրկելու համար։ Դրանից ելնելով Ա. Ս. Ֆ. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պարտավորեցնում է բամբակային ռայոնների խորհրդային և կոլխոզային կազմակերպություններին, կոոպերատիվ և հողային բոլոր օրգաններին՝ մոբիլիզացիայի ենթարկելու ուժերը այդ աշխատանքը տանելու համար, լայն մասսայական աշխատանք ծավալելով կոլխոզնիկների ու անհատական չքավոր-միջակային մասսաների մեջ՝ բամբակային պայմանագրեր կնքելու կամպանիայի շուրջը։

Ա. Ս. Ֆ. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն անհրաժեշտ է համարում բամբակային ռայոնների բոլոր կազմակերպություններին առանձնապես նախազգուշացնելու, որ որևէ չափով չկրկնեն անցյալ տարի բամբակը պայմանագրելիս տեղի

28 FEB 2013 38987



ունեցած լուրջ թերությունները։ Այդ թերություններն արտահայտվել են նրանում, որ խորհրդային կազմակերպությունների ղեկավարությունը բացարձակապես թույլ է յեղել, կոլխոզմիությունները, բամբակկոոպմիությունները, գյուղխորհուրդները և արտադրական ընկերությունները չեն վերահսկել կնքված պայմանագրերի կատարումը, պայմանագրված տարածությունների արհեստական կերպով ուռցրել են, մի շարք տեղերում կեղծ (ֆիկտիվ) պայմանագրումներ են յեղել և այլն։

Անդ. Սոց. Ֆեդ. Խորհ. Հանր. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պարտավորեցնում է ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների Ժողկոմխորհներին և ռայոնական գործադիր կոմիտեներին՝ ապահովել ամենօրյա կանոնավոր ղեկավարությունը պայմանագրեր կնքելու կամպանիայի վերաբերմամբ և ռայբամբակմիությունների, արտադրական ընկերությունների ու գյուղխորհուրդների կողմից խիստ վերահսկողություն սահմանել՝ անհատական չքավոր-միջակային տնտեսությունների վրա՝ հիշված պայմանագրերը կատարելու վերաբերմամբ—նույնը պետք է անեն կոլխոզմիությունները ու գյուղխորհուրդները՝ կոլխոզների կողմից պայմանագրերը կատարելու նկատմամբ։

Վերոհիշյալի համապատասխան՝ ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.—

1. Պայմանագրման վերաբերմամբ հետևյալ առաջադրությունը սահմանել՝

ա) բամբակային ցանքերի տարածության վերաբերմամբ (հեկտարներով)—

ՀԱՍՌ-Арм ССР
61925-6



| | Կոլխոզներում. | Անհատական տնտեսություններում. | Ընդամենը |
|---|---|---|---|
| Խորհ. Ադրբեջանում | 95,200 | 97,300 | 192,500 |
| „ Հայաստանում | 15,050 | 8,850 | 23,900 |
| „ Վրաստանում | 4,750 | 9,450 | 14,200 |
| Ընդամենը | 115,000 | 115,600 | 230,600 |

Անջրդի ցանքը Խորհ. Ադրբեջանում—1,000 հեկտար և Խորհ. Վրաստանում—300 հեկտար։

բ) մի հեկտարի բերքատվությունը հասցնել (կիլոգրամներով)—

| | Կոլխոզներում | Անհատական տնտեսություններում | Անջրդի |
|---|---|---|---|
| Խորհ. Ադրբեջանում | 816 | 786 | 300 |
| „ Հայաստանում | 1,120 | 1,100 | — |
| „ Վրաստանում | 650 | 630 | — |

Պարտավորացնել Անդրխլոպկոմին և Անդրբամբակմիությանը (բամբակաբուծական կոոպերացիայի գծով) 5 օրվա ընթացքում հաղորդելու ստորին կազմակերպություններին՝ պայմանագրման չենթակա բամբակի բերքատվության նորմաները ըստ ռայոնների։

գ) հնձավոր-բամբակի արտադրանքի հանձնումը (տոններով)

| | Կոլխոզներում | Անհատական տնտեսություններում | Ընդամենը |
|---|---|---|---|
| Խորհ. Ադրբեջանում | 77,404 | 76,264 | 153,668 |
| „ Հայաստանում | 16,856 | 9,735 | 26,591 |
| „ Վրաստանում | 3,017 | 5,920 | 8,937 |
| Ընդամենը | 97,277 | 91,919 | 189,196 |

2. Բամբակի պայմանագրումն սկսել անհապաղ և բոլոր ռայոններում վերջացնել ապրիլի 15-ից վոչ ուշ։

3. Պարտադիր համարել, վոր պայմանագրեր կնքվեն անհատական չքավոր-միջակային տնտեսությունների հետ առանձին-առանձին՝ ամեն մի ցանողի հետ՝ արտադրական ընկերությունների միջոցով՝ պայմանագրերը բամբակաբույծների մասսաների մեջ լայնորեն քննելու հիման վրա։

Կոլխոզների վերաբերմամբ պարտադիր համարել պայմանագրերի քննությունը կոլխոզի անդամների ընդհանուր ժողովի կողմից. կոլխոզի վարչությունը պայմանագիրը ստորագրում է միայն կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից այդ պայմանագիրը հաստատելուց հետո։

4. Բամբակի պայմանագրումը կատարել՝ կոլխոզներին և չքավոր-միջակային տնտեսություններին իրեն վարկ տալով լավ վորակի ու բարելավված ցանելու սերմ անհրաժեշտ քանակությամբ, նաև դրամական ավանսներ։



5. Կուլակային-ունևոր տնտեսություններին ավանս չի տրվում, նրանք բամբակի ցանքսերն անում են պարտադիր առաջադրությունների կարգով։

Կուլակային-ունևոր տնտեսությունների չափը սահմանել տնտեսությունների ընդհանուր թվի 3—7%-ը։ Այդ տնտեսությունների բերքատվությունը սահմանել գյուղի միջին բերքից 10% բարձր։

Հանձնարարել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների Ժողկոմխորհներին՝ 10-ն որվա ընթացքում վորոշելու կուլակային—ունեվոր տնտեսությունների քանակը, վորոնց հաստատուն առաջադրություններ են տրվում, և նրանցում ցանվելիք տարածությունների նորմաներն՝ ըստ առանձին ռայոնների։

6. Ցանողների հետ կնքվող պայմանագրերի մեջ մտցնել՝ ցանողների համար հետևյալ պարտականությունները (կոլխոզների և անհատական չքավորա-միջակային տնտեսությունների համար).—

ա) ցանքսը լրիվին վերջացնել մայիսի 10-ից վոչ ուշ, այնպես վոր ռայբամբակմիությունների կողմից ցանողների հետ կապած պայմանագրերում ըստ ռայոնների նշանակված լինեն ցանքսի սկիզբը և վերջը՝ տվյալ ռայոնում.

բ) պայմանագրվողի կողմից, բամբակի ցանքսի համար հողի ժամանակին հերկելը, նշանակված ժամկետներին առաջին ու երրորդ քաղհանը և կուլտիվացիան, նույնպես և ցանքսի նոսրացում կատարելը.

գ) պարտադիր կերպով, նշանակված ժամկետներին բամբակի վոռոգումը կատարելը, ամեն տեղ նաև գիշերային վոռոգում անելը.

դ) նշանակված ժամկետներին ամբողջ բամբակի հավաքելը տեսակներով, այնպես վոր քաղն ու ամբողջ բամբակի հանձնումը կատարվի դեկտեմբերի 20-ից վոչ ուշ.

յե) ցանողների կողմից լիովին ոգտագործել սեփական բանվորական և քարշող ուժը՝ հերկի, ցանքսի, քաղհանի, կուլտիվացիայի և բամբակի հավաքման ժամանակամիջոցում.

զ) Նշանակված ժամկետներին վերադարձնել բոլոր պայմանագրական գումարները:

7. Ցանողների հետ կապած պայմանագրերում մտցնել նաև հետևյալ պարտականությունները, վոր իրենց վրա են ընդունում Զակխլոպկոմը և բամբակային կոոպերացիան.—

ա) ժամանակին տալ ցանողներին լավ տեսակի ցանելու սերմ.

բ) ժամանակին տալ ավանսի գումարները (հոդվ. 10).

գ) կոմպլեքսային միջոցառումների ռայոններում ցանողներին տալ՝ պայմանագրման ժամանակաշրջանում՝ պարարտացման խառնուրդներ այն նորմաներով և բաղադրությամբ, ինչ վոր սահմանված է ԱՍՖԽՀ Հողժողկոմատի կողմից՝ առանձին ռայոնների համար.

դ) ժամանակին հաշիվ տեսնել հանձնված հնդավոր բամբակի համար.

յե) ցանողներին ապահովել հացով:

8. Պայմանագրվող ամեն մի տոնն հնդավոր բամբակի համար սահմանել դրամական ավանսավորման հետևյալ նորմաները՝ կոլխոզների համար—62ռ. 70 կոպ. անհատական տնտեսությունների համար—48 ռ. 11 կ:



Բամբակի անջրդի և կիսաջրովի ցանքսերի վերաբերմամբ ավանսների նորմա սահմանել 50% բարձր, քան թե ջրովի ռայոնների նորմաներն են:

9. Համաձայն դրամական ավանսների սահմանված նորմաների՝ բամբակի պայմանագրման համար ֆոնդ սահմանել հետևյալ չափերով՝

Խորհրդ. Ադրբեջանի համար—8,134000 ռ.
» Հայաստանի » —1,474,000 »
» Վրաստանի » — 452,000 »

Ընդամենը—10,060,000 ռ.

ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին պարտավորեցնել՝ թույլ չտալու, վոր ավանսավորման համար սահմանված ֆոնդերն բարձրացվեն:

10. Ավանսները տալ 3 ժամկետներում՝

ցանքսից առաջ—20 տոկոս, փաստորեն կատարած ցանքսն սկսելուց հետո.

առաջին քաղհանից և կուլտիվացիայից առաջ—30%,

յերրորդ քաղհանից և կուլտիվացիայից առաջ—50%:

Յերրորդ քաղհանից և կուլտիվացիայից առաջ ավանս տրվում է միայն այն դեպքում, յեթե առաջին ու յերկրորդ քաղհանն ու կուլտիվացիան կատարված են:

11. 1931 թվին հացի յերաշխավորված մատակարարում ընդունել կոլխոզների ու անհատական չքավոր-միջակային տնտեսությունների վերաբերմամբ, բաժանելով ԱՍՖԽՀ բոլոր ռայոնները, հետևյալ յերեք գոտիներին՝

1-ին գոտի—այն ռայոնները, որտեղ արգելված է հացահատիկային մշակություններ ցանելը (մեքենայական ոռոգում ունեցող ռայոնները).

2-րդ գոտի—Խորհ. Հայաստան և Խորհ. Նախիջևան.

3-րդ գոտի—Խորհ. Ադրբեջան և Խորհ. Վրաստան։

12. Հաց տալ նայած թե որքան բամբակ է պայմանագրված և փաստորեն որքան հնդավոր բամբակ է հանձնված՝ բաժանելով հացի մատակարարման նորմաներն ըստ սեկտորների։

Հացի մատակարարման հետևյալ նորմաները սահմանել՝ պայմանագրված հնդավոր բամբակի ամեն մի ցենտների համար (կիլոգրամներով)—

| | Կոլխոզների համար | Անհատական չքավոր-միջակային տնտեսությունների համար |
|---|---|---|
| 1-ին գոտի—այն ռայոնները, որտեղ արգելված է հացահատիկային մշակություններ ցանելը (մեքենայական ոռոգում ունեցող ռայոնները) . | 54,0 | 41,0 |
| 2-րդ գոտի—Խորհրդային Հայաստան և Խորհրդային Նախիջևան . . . . . . . . . . | 49,5 | 38,0 |
| 3-րդ գոտի—Խորհրդային Ադրբեջան (առանց մեքենայական ոռոգում ունեցող ռայոնների) և Խորհ. Վրաստան . . . . | 39,0 | 30,0 |



Համաձայն մատնանշված նորմաների՝ 1931 թվին նորմալ հացամատակարարումն ապահովող հացի ընդհանուր քանակը որոշել հետևյալ չափերով (տոններով).—

| | | |
|---|---|---|
| | Խորհ. Ադրբեջանի համար | 52,390 տոնն |
| | „ Նախիջևանի „ | 3,860 „ |
| Ընդամենը | Խորհ. Ադրբեջանի համար | 56,250 տոնն |
| | Խորհ. Հայաստանի համար | 11,800 „ |
| | „ Վրաստանի „ | 2,950 „ |
| Ընդամենը | ԱՍՖԽՀ համար | 71,000 տոնն։ |

13. Հացը տալ համաձայն հիմնական տրամադրակար պրոցեսների՝

ա) պայմանագրման և ցանքսի ժամանակաշրջանում՝ հացի սահմանած նորմայի 20%-ը.

բ) ցանքսերը և առաջին քաղհանն ու կուլտիվացիան ստուգելուց հետո՝ նույն նորմայի 15%-ը.

գ) երրորդ քաղհանի և կուլտիվացիայի ավարտման ստուգումից հետո՝ նույն նորմայի 15%-ը.

դ) բամբակամթերման ժամանակաշրջանում՝ հնդավոր բամբակը հանձնելու չափով՝ մնացած քանակությունը։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Այն տնտեսություններին, որոնք բամբակի ամբողջ տարածության վրա չեն քաղհան և կուլտիվացիա արել, ամեն անգամ հաց տրվում է փաստորեն մշակած տարածությունը հաշվի առնելով։

Կոլխոզների ներսում հացը բաժանվում է խստիվ ինկատի առնելով այն աշխատ-օրերի

քանակը, վոր գործել են կոլխոզնիկները և նրանց ընտանիքի անդամները։

14. Անկախ վերոհիշյալ միջոցառումներից՝ առաջարկել Անդրխլոպկոմին և Անդրտրակտորցենտրին՝ կազմակերպելու պայմանագրվածներին գյուղատնտեսական օգնություն հասցնելու գործը—ռայոնական և հողամասային ագրոկետերի միջոցով։

. . . . . . . . . . . . . . . . . . Անդրկովկասյան բաժանմունքը պետք է կազմակերպի բամբակի վնասատուների դեմ մղվող պայքարը՝ այդ բանն ապահովելով անհրաժեշտ ապարատներով և թույներով։

15. Ինկատի առնելով՝ 1931 թվին օգտագործելու համար նշանակված պարարտանյութերի քիմիական բաղադրությունը և ամեն մի հեկտարի համար նշանակված միջին նորման, վոր 460,4 կիլոգրամ է, անկախ պարարտանյութերի համարներից, բամբակացանների համար պարարտանյութերի գին սահմանել 30 ռուբլի՝ մի հեկտարից։

Բաց թողնելու գնի—30 ռուբլու և ինքնարժեքի, վոր կալկուլյացիայով վորոշված է 65 ռուբլի 23 կոպ. հեկտարից, Անդրխլոպկոմի հաշվին գցել։

Պարարտանյութերը վարկով տալ՝ մինչև բամբակի բերքը հավաքելը, արժեքը պահելով բամբակացաններից, երբ նրանց հանձնած բամբակի համար հաշիվ է քաշվում։

16. Առանձնացնել 16 հազար տոնն հատիկա-կեր՝ կոլխոզներին և չքավոր-միջակային տնտեսություններ մատակարարելու համար, առաջին հերթին ապահովելով կոլխոզները։ Պարտավորացնել ԱՍՖՍՀ Մատակարարման Ժողկոմատին՝ Անդրխլոպկոմի և Անդր-



գյուղմիության հետ միասին բաժանելու հատիկա-կերի հիշյալ քանակությունը ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև։

Հանձնարարել ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին՝ պարտավորեցնելու հանրապետական մատակարարման ժողկոմատներին, հողժողկոմատներին և բամբակային կոոպերացիայի կենտրոններին, վոր նրանք 10 օրվա ընթացքում մշակեն բամբակարույծներին հատիկա-կեր մատակարարելու կարգը, նորմաները և ժամկետները։

17. Պարտավորեցնել ԱՍՖՍՀ Մատակարարման Ժողկոմատին՝ Անդրխլոպկոմի, Զակսոյուզի և Անդրգյուղմիության հետ միասին՝ 5 օրվա ընթացքում սահմանելու 21 միլ. ռ. ֆոնդի արդյունաբերական ապրանքների պահանջվող կոնտինգենտը, նույնպես և ներմուծելու ժամկետներն ու բամբակարույծներին մատակարարելու կարգը։

18. Հացի և հատիկա-կերի ներմուծումը հանձնարարել Սոյուզխլեբին, իսկ դրանց բաժանումը բամբակարույծներին—բամբակային կոոպերացիային։

Արդյունաբերական ապրանքների բաժանումը հանձնարարել սպառկոոպին։

19. Հացի և արդյունաբերական ապրանքների ժամանակին ներմուծմանը և ուղիղ բաշխմանը հետևելու պատասխանատվությունը դնել ԱՍՖՍՀ Մատակարարման Ժողկոմատի վրա։

20. Բամբակի ցանելու սերմերի գին վորոշել կիլոգրամին 4 կոպեկ՝ ֆրանկո այն տեղը, ուր հնդավոր բամբակը բամբակարույծների կողմից պիտի հանձնվի։

21. Պարտաճանաչ պայմանագրվողներին և կոլխոզներին խրախուսելու նպատակով,—որոնք ժամանակին ու լրիվին կատարում են իրենց պարտականությունները, ցանելու, խնամելու, ցանքսերը մշակելու, պայմանագրված բամբակը հավաքելու և հանձնելու վերաբերմամբ,--սահմանել հատուկ ֆոնդ, դրա համար ընդհանուր ներմուծվող արդյունաբերական ապրանքներից մի միլիոն ռուբլու ֆոնդ կազմելով։

ԱՍՖԽՀ Մատակարարման Ժողկոմատը, Հողժողկոմատն ու Զակխլոպկոմը տասն օրվա ընթացքում պիտի հրատարակեն բամբակաբույծներին պրեմիաներ տալու նորմաներն ու կարգը:

22. Պայմանագրման կամպանիայի գործառնական ղեկավարությունը հանձնել Անդրխլոպկոմին և բամբակային կոոպերացիային։

23. Պարտավորեցնել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների ժողկոմխորհներին, պայմանագրող կազմակերպություններին և ռայոնական գործադիր կոմիտեներին՝ խիստ վերահսկողություն սահմանելու, որ փաստորեն ցանած տարածությունը պակաս չլինի պայմանագրածից։

ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի փոխնախագահ՝ ՑԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՍՖԽՀ Ժողկոմխորհի և Գերտնտխորհի
գործերի վարիչի ժամ. պաշտոնակատար՝
ՍՈԿՈԼՈՎՍԿԻ

1-ին մարտի 1931 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0213372

38.987
СА 32-/89
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР